Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Տավուշի մարզի <<Բագրատաշենի Մ. Մագուլյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ -ի անգլերենի /38 դասաժամ/ , /, արվեստ /9 դասաժամ/, ԹԳՀԳ /4 դասաժամ/,ֆիզիկա/8 դասաժամ/, ռուսերեն/14 դասաժամ/, հայոց լեզու և գրականություն /13 դասաժամ /, դասվար /17 դասաժամ/, զինղեկ /5 դասաժամ/, առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

• դիմում /ձև 1/

• 1 լուսանկար 3 *4 չափի

*բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը / դիպլոմ/

*անձը հաստատող փաստաթուղթ

• Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/ :

• ինքնակենսագրություն/ձև 5/

• այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ

*ՀՀ արական սեռի քաղաքացիներից ՝ նաև զինվորական գրքույկ

• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում

Digitally signed by ANTONYAN ZARUHI 5105730607
Date: 2023.08.28 15:36:02 AMST

*որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. օգոստոսի 29- ից մինչև 2023 թ. սեպտեմբերի 11 -ը ներառյալ , ամեն օր ժամը 9:00-ից -15:00-ը՝ բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ-ի սեպտեմբերի 18-ին

ժամը 15:00 -ին:

Բագրատաշենի Մ. Մագուլյանի անվան թիվ 1

միջնակարգ դպրոցում՝ 6 փողոց , շենք 15

հասցեում: